

# ՎԵՐԱՐՏԱԴԻՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ COVID-19-Ի ՂԵՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐ

Սեպտեմբեր 2021

## ՀՂԻՈՒԹՅՈՒՆ

Հղի կամ վերջերս հղիացած անձինք, որոնք վարակվում են COVID-19-ով, ավելի մեծ հավանականություն ունեն ծանր հիվանդանալու՝ համեմատած ոչ հղի մարդկանց հետ:<sup>3,4</sup>

COVID-19-ով վարակված հղիները նույնպես ավելի մեծ հավանականություն ունեն հղիության հետ կապված բարդությունների, օրինակ՝ վաղաժամ ծննդաբերության:<sup>3, 4</sup>

Հիվանդությունների Վերահսկման Կենտրոնները(CDC), Մանկաբարձների և Գինեկոլոգների Ամերիկյան Քոլեջը, ինչպես նաև Մոր և Պտղի Բժշկության Միությունը խորհուրդ են տալիս, որ բոլոր հղի անձինք պատվաստվեն COVID-19-դեմ:<sup>1</sup>



## ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՈՒՄ

Չկա ապացույց այն մասին, որ COVID-19-ը փոխանցվում է երեխաներին կրծքի կաթի միջոցով:



Կրծքով կերակրող մարդիկ, որոնք պատվաստվել են Pfizer կամ Moderna պատվաստանյութերով, իրենց կրծքի կաթի մեջ ունեն հակամարմիններ, որոնք կարող են օգնել պաշտպանել իրենց երեխային: Սա չի նկատվել J&J պատվաստանյութի դեպքում:<sup>4</sup>

## Դաշտան

Որոշ մարդիկ հայտնում են COVID-19-ի դեմ պատվաստումից հետո իրենց դաշտանային ցիկլում փոփոխությունների մասին՝ արյան առատ կամ սակավ հոսք կամ անսպասելի արյունահոսություն: Այդ փոփոխությունները ժամանակավոր են և վնասակար չեն:<sup>5</sup>

## ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ



Չկա ապացույց այն մասին, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութերն առաջացնում են վիժում կամ տղամարդկանց կամ կանանց անպտղություն: <sup>2,4</sup>

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ



Բոլոր 3 պատվաստանյութերի օգուտները գերազանցում են դրանց ռիսկերը:

### PFIZER (COMIRNATY)

2 ՂԵՂԱԶՎՓ՝ 21 ՕՐ ՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՐ

### MODERNA

2 ՂԵՂԱԶՎՓ՝ 28 ՕՐ ՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՐ

### J & J

1 ՂԵՂԱԶՎՓ

ԲՈՒՆՈՐԸ ԱՊԱԳՅՈՒՄ ՀԱՎԵԼՅԱԼ ԽԱՆՆՈՒ ՆԵՐԱՎՈՒՄՆԵՐ

Միացյալ Նահանգներում հասնելի են COVID-19-ի դեմ 3 տարբեր պատվաստանյութեր: Ապացուցված է, որ դրանք անվտանգ են և արդյունավետ:<sup>6</sup>

Դուք պատվաստանյութից չեք կարող վարակվել COVID-19-ով: Պատվաստանյութերից ոչ մեկը չի պարունակում COVID-19-ի հարուցիչ վիրուսը:<sup>6</sup>

J&J պատվաստանյութով պատվաստված մարդկանց մոտ կա արյան մակարդուկների և ցածր թրոմբոցիտների հետ կապված հազվադեպ, բայց լուրջ առողջական խնդրի վտանգ: Այն տեղի է ունեցել 18-49 տարեկան պատվաստված յուրաքանչյուր 1 միլիոն կանանցից 7-ի մոտ: COVID-19-ով վարակվելու դեպքում արյան մակարդուկների առաջացման վտանգը ՇԱՏ ԱՎԵԼԻ բարձր է, քան պատվաստման դեպքում:<sup>7,8</sup>



ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ COVID-19-Ի ԴԵՄ  
ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ, ՀՂԻՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՄԱՍԻՆ

- Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության՝ COVID-19-ի դեմ Պատվաստման ՀՏՀ՝ Հղիություն, Կրծքով Կերակրում և Պտղաբերություն՝ [VaccinateLACounty.com](https://www.vaccinatelacounty.com)
- CDC –ի COVID-19-ի Դեմ Պատվաստումը Հղիության Կամ Կրծքով Կերակրելու Ընթացքում՝ <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/vaccines/recommendations/pregnancy.html>
- CDC-ի COVID-19-ի Դեմ Պատվաստանյութերը Այն Անձանց Համար, Որոնք Ցանկանում են Երեխա Ունենալ՝ <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/vaccines/planning-for-pregnancy.html>
- Սոր և Պտղի Բժշկության Միություն. COVID-19-ի դեմ Պատվաստում, Եթե Հղի եք Կամ Կերակրում եք Կրծքով

## ԻՆՉՊԵՍ ՊԱՏՎԱՍՏԿԵԼ

Այցելեք [VaccinateLACounty.com](https://www.vaccinatelacounty.com) և սեղմեք <<Ինչպես Պատվաստվել>>՝ ձեզ մոտիկ պատվաստման վայր գտնելու համար:

Պատվաստման վայրերից շատերում անհրաժեշտ չէ նախապես ժամադրվել:

Պատվաստանյութերն անվճար են, և ձեզինց չի պահանջվում ապահովագրություն: Ձեզ չեն հարցնի ձեր ներգաղթի կարգավիճակի մասին:

Դուք կարող եք զանգահարել նաև Պատվաստումների Չանգերի Կենտրոն հետևյալ հեռախոսահամարով՝ 833-540-0473: Չանգերի կենտրոնը գործում է ամեն օր՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 8:30-ը և կարող է օգնել ձեզ՝

- Գտնել պատվաստման վայր ձեր համայնքում
- Կազմակերպել փոխադրում դեպի պատվաստման վայր և ետ
- Դիմել տնային պատվաստման համար, եթե չեք կարող լքել տունը:

1ACOG-ը և SMFM-ը Հղի Անձանց Խորհուրդ են տալիս Պատվաստվել COVID-19-ի Դեմ՝ <https://www.acog.org/news/news-releases/2021/07/acog-smfm-recommend-covid-19-vaccination-for-pregnant-individuals>

2 CDC. CDC-ի Տվյալներ՝ COVID-19-ի Դեմ Պատվաստումն Անվտանգ է Հղի Անձանց համար՝ <https://www.cdc.gov/media/releases/2021/s0811-vaccine-safe-pregnant.html>

3 CDC. Հղի և Վերջերս Հղիացած Անձինք Գտնվում են Covid-19-ի հետևանքով ծանր հիվանդանալու վտանգի ներքո՝ <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/need-extra-precautions/pregnant-people.html>

4 CDC. COVID-19-ի Դեմ Պատվաստումը Հղիության Կամ Կրծքով Կերակրման Ընթացքում՝ <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/vaccines/recommendations/pregnancy.html>

5 NIH. COVID-19-ի Դեմ Պատվաստանյութերը և Դաշտանային Ցիկլը՝ <https://covid19.nih.gov/news-and-stories/covid-19-vaccines-and-menstrual-cycle>

6 CDC. Ապահովելով COVID-19-ի Դեմ Պատվաստանյութերի Անվտանգությունը Միացյալ Նահանգներում՝ <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/vaccines/safety.html>

7 CDC. CDC-ը Խորհուրդ է տալիս Johnson and Johnson's Janssen COVID-19-ի դեմ Պատվաստանյութի Օգտագործման Վերսկսումը՝ <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/vaccines/safety/JJUupdate.html>

8 CDC. ԻՆչ Ե անհրաժեշտ իմանալ COVID-19-ի դեմ Johnson & Johnson's Janssen (J&J/Janssen) Պատվաստանյութի մասին հիմա՝ <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/downloads/vaccines/324167-a-consumer-facing-three-vaccines-8.5x11-final-print.pdf>

